

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ԱՍՊԱՐԵ2»Ի

ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԸ ՓԱՍՏԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ ԶԷ՞ ԳՏԱԾ ԿԸ ՄԵԱՅ ԶԱՅՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՅՆԵԼԸ

Մտաւորապէս դար մը առաջ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներէն Քրիտատափոր Միքայէլեան կ'առաջադրէր պատուել բունակայներու ձեռքով գծուած քարտէսները, որոնք կը միտէին ստրկացնել ժողովուրդները, անոնցմէ խել բնորոշները եւ ի հարկին՝ իւրացնել: Հայ յեղափոխական շարժման ներքին տրամաբանութիւնը զարգացաւ Քրիտատափորի այս պատգամին գծած ուղիով:

Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան տարիներուն մեծ ուժերը արգելք հանդիսացան հալածութեան պատկանող հողերու մէկտեղումին: Բրիտանական կայսրութեան արտաքին քաղաքականութիւնը, որուն ներքին գապանակը քարիւղն էր 20րդ դարու առաջին իսկ տասնամեակէն սկսեալ, արուեստականօրէն ստեղծուած երկրի մը (Ազրպէյճան) քարիւղի պաշարներուն սիրոյն արգելք հանդիսացաւ Արցախի միացման՝ Հայաստանին: Ինչ որ Լոյտ Ճորճի կառավարութիւնը կէս ձգած էր, ամբողջացուցաւ Մտալին՝ Արցախը «վերածելով» Լեռնային Ղարաբաղի ու խորհրդային բոլոր կեղծ արժէքներու նմանող նոյնքան կեղծ ինքնավարութեան շղարշով մը զայն կցելով Խորհրդային Ազրպէյճանին:

Հետագայ տարիները ցոյց տուին, թէ Լոյտ Ճորճ, ինչպէս նաեւ Մտալինէն Գորբաչով երկարող խորհրդային իրերաշարժող ղեկավարները ողբալիօրէն ձախողեցան իրենց մեծապետական հաշիւներուն մէջ: 1965ը՝ Հայկական Յեղապայանութեան յիսնամեակը, մեր ժողովուրդի քաղաքական արթնութեան զարթուցիչ գանգը հանդիսացաւ կարծէք: Այս մթնոլորտին արդիւնքով էր, որ նոյնինքն Արցախի մէջ Բենիկ Մովսիսեաններ «կը յանդգնէին» իւրայատուկ ոճով մը պատուել բունատէրերու կողմէ գծուած քարտէսները՝ անձնապէս սուղ զին վճարելով հանդերձ:

Սակայն ներկայացաւ պատմական «մոմենտը» եւ համայն հայութիւնը վերցուց նետուած ձեռնոցը:

Հ. Յ. Դաշնակցութիւնը չունէր այն պատրաստիքը, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզին՝ ԽՀայաստանի միացման հարցը պիտի վճռուի Կրեմլի սակարկութեան սեղաններուն վրայ միայն: Դաշնակցութեան ծնունդ տուող ներքին տրամաբանութիւնը կը յուշէր մեզի, որ նման հարցեր, դժբախտաբար, կը լուծուին միայն ուժի եւ ոչ թէ սոսկ արդարութեան տրամաբանութեամբ: Դաշնակցութեան այս ժամանակաշրջանի աշխատանքը ընթացաւ նոյն այս գիտակցութիւնը գործնական կեանքի վերածելու ուղիով:

Այսօրեան դրութեամբ, թնդանօթները լուծ են: Զինադուր երկուստեք կը յարգուի մօտաւորապէս 8 տարիէ ի վեր, եւ մնայուն խաղաղութեան յանգելու գործընթաց մը գոյութիւն ունի, Մինսքի խմբակին միջնորդութեամբ, ուր որոշիչ դեր ունին Ռուսիա, Ֆրանսա եւ Մ. Նահանգներ, իբրեւ համանախագահներ այս խմբակին: Միաժամանակ, Արցախի փաստօրէն գաղտագրուած է, թօթփած է ազրպէյճանական լուծը եւ 1991էն ի վեր աշխարհին կը ներկայանայ իբրեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն, հոգ չէ, թէ միջազգային օրէնքի ենթադրած ճանաչումը չի վայելեր: Ճիշդ է նաեւ, որ օրինականօրէն ան մաս չի կազմեր մայր հայրենիքին, սակայն իրերու զարգացումը տրամաբանական ընթացքի մէջ է:

Միւս կողմէ, Ազրպէյճան ինք եւս գիտէ այս իրականութիւնը: Գիտէ, թէ այսօր գործնական իրեն չի պատկանիր այն՝ ինչ որ խորհրդային կեղծ օրինականութեամբ իրեն յանձնուած էր Մտալինի կողմէ: Պաքուի իշխանութիւնները իրենք եւս «պատմաբեր» լուծումի մը հետամուտ են եւ այս առումով, իրենց կը մնայ քաջութիւնը դրսեւորել, որովհետեւ բնական հարստութիւնները բարգաւաճ կենսամակարդակի վերածելու իրենց փափաքը չի կրնար իրականանալ առանց մնայուն եւ արդար ինքազորութեան եւ այդ խաղաղութեան ենթադրած կայունութեան:

Մենք կը հաւատանք, որ հարցը իր վերջնական լուծումը պիտի գտնէ միջազգային օրինականութեան ծիրին մէջ, բանակցութիւններու սեղանի վրայ: Հայութիւնը յարգած է իր բնօրրանին մաս կազմող Արցախը ազատագրել: Հողերու «փոխանակման» մասին խոսակցութիւնները շատոնց փաստած են իրենց անլրջութիւնը: Ազրպէյճանին ենթակայութեան թղթածրարը, նոյնքան անլուրջ ըլլալով, նոյնպէս փակուած պէտք է համարել, հոգ չէ, թէ ինչպիսի շաքարապատումով ներկայացուի մեզի: Հարցին վախճանը լուծումը կը կայանայ կա՞մ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան միջազգային ճանաչումով եւ կամ պաշտօնապէս Հայաստանի միացումով՝ միջազգային օրէնքի ենթադրած կանոններու հիման վրայ: Իսկ լուծման այս պատկերացումին մէջ կրնա՞ն տեղ գտնել մարտավարական ընդմիջի գիծերներ, հաւանաբար: Սակայն կարմիր դիմ մը կայ արդէն, եւ հայկական դիւանագիտութիւնը, իր ետին ունենալով քաղաքական ուժերու եւ ժողովրդային հզօր կամքը, տիրութիւնը պիտի ընէ գիծին, որպէսզի չըջանին մէջ տիրէ արդարութեան վրայ խորհուած խաղաղութիւն եւ կայունութիւն:

ԱԿՆԱՐԿ ԲԱՐԵՓՈՒՍԵԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Այսօր Հայաստանի ներքաղաքական կեանքում կարեւորագոյն խնդիրներից մէկը, եթէ ոչ առաջինը, համարուում է սահմանադրութեան բարեփոխման հարցը: Այլ խօսքով, առաջադրուած է պետական կառավարման էութեան ու կարգի, իշխանութեան համակարգի բարեփոխման խնդիրը: Ինչն էլ այսչափ կարեւորում այս հարցը եւ ինչն էլ անհրաժեշտ է վերջինիս շուտափոյթ եւ դրական լուծում գտնել:

Ակնյայտաբար, Հայաստանում առաջին եւ զլիսաւորագոյն քաղաքական իրողութիւնը համակարգային ճգնաժամն է: Ներքաղաքական յայտնի հանգուցային իրողութիւնները սկզբնապատճառը վերոնշեալ իրողութիւնն է, եւ քաղաքական զարգացումների տրամաբանութիւնն ընթանում է այս իրողութեան շրջանակներում ըստ փուլերի՝ սկսած 1991 թուականից: Ինչն էլ ինչպիսի՝ իշխանութեան համակարգ է գործում Հայաստանում:


Պատասխանը յայտնի է՝ քլանային-սակաւապետական համակարգ: 1996 թուականին սա պաշտօնապէս ճանաչուած իրողութիւն է: Ե՛ւ քլան, ե՛ւ սակաւապետութիւն եզրերն ունեն ընդհանուր յատկանիշներ: Առաջինը բնորոշում է իբրեւ հասարակական եւ տնտեսական կապերով միաւորուած տոհմակիցներին, բարեկամներին իսկ: Երկրորդը՝ որպէս մենաշնորհաւոր դրամագիր տէր խմբակի քաղաքական ու տնտեսական տիրապետութիւն: Այլ խօսքով՝ Հայաստանում ձեւաւորուած է փոքրամասնութեան իշխանութեան համակարգ: 1996 թուականին քլանային եւ ստուերային տնտեսութեան գործող համակարգի ճանաչումն էր փաստացիօրէն ճանաչուեց նաեւ ստուերային իշխանութեան գոյութիւնը: Մինչդեռ ստուերային իշխանութեան մաս կազմող խմբերն աստիճանաբար սերտաճում եւ փորձում են պետական հիմնարկները փոխարինել իրենցով: Արդիւնքում՝ քլանային իշխանութեան համակարգը վերածուում է պետութեան նկատմամբ հակահամակարգի՝ պատճառ դառնալով համակարգային ճգնաժամի:

Եւ քանի որ ինչպէս քլաններին, այնպէս էլ սակաւապետութեան ընդհանուր բնութագրական յատկանիշը տնտեսական փոխկապուածութիւնն է, ընդհանուր նպատակը՝ տնտեսական շահը, ապա այս գերակայ նպատակին են ծառայում նաեւ քաղաքական յարաբերութիւնները: Այս համակարգում ազգային, քաղաքական, ընկերային շահերը ստորադասուում են՝ ստեղծելով խոր անըլպետ միեւնոյն օրկանիքով, ազգի ու պետութեան քաղաքիչ մասերի՝ հասարակական խաւերի միջեւ: Ասուածը փոխտուում են առայսօր կատարուած վիճակագրական բոլոր կարգի հարցումների տուեալները: Ժողովուրդի մեծամասնութեան եւ մնացած մասի միջեւ առկայ է անհամաձայնութիւն գրեթէ բոլոր ոլորտներում: Գլխաւոր անհամաձայնութիւնը, սակայն, վերաբերում է Հայաստանի զարգացման հեռանկարի եւ արժէքային համակարգի փոխարաբերութեան խնդրին:

Հայ ժողովուրդն իր պետութեան զարգացումը կապում է ազգային արժէքային համակարգի հետ՝ ընկերային արդարութեան գաղափարի համադրմամբ: Հայուն չառնել ընկերային արդարութեան եւ ազգային արժէքների վրայ խորհուած ինքնաբերական համակարգ փոխելուց եւ հասարակական պահանջները եւ հակադրել քլանային-սակաւապետական համակարգը որպէս կառավարման ձեւ՝ յղի է իրավիճակի շարունակական ապակայունացման սպառնալիքով: Սա նշանակում է, որ պետական կառավարման համակարգի ընտրութեան եւ կայացման հիմնախնդիրը որպէս գործօն առաջնային է Հայաստանի ներքաղաքական զարգացումներում եւ քաղաքական-տնտեսական իրադարձութիւնների տրամաբանութիւնը պայմանաւորուած է այս իրողութեամբ:

ՍԱՄՈՒԷԼ ԷՌՈՅԵԱՆ

«Դրօշակ»



ԻՍԿԱԿԱՆ ՀԱՅՐ

Դարեր ի վեր մեր երկիրն ապրում է հրաշքի ակնկալիքով: Ամենայայտնի մարդիկ մեզանում աճապարհներ Հմայեակ Յակոբեանը, Տէյվիտ Քափըրֆիտն ու Ելեմուտեքի նախարար Վարդան Նաչատրեանն են: Իսկ ամենանորոյթ մասնագիտութիւնները՝ գուշակութիւնն ու կախարհանքը:

Գերբնական ուժերի նկատմամբ ժողովրդի հաւատը միշտ շահարկել են քաղաքական գործիչները: մէկը 20 տարի անց համայնավարութիւն էր խոստանում, միւսը՝ իւրաքանչիւր ընտանիքին առանձին բնակարան, երրորդը՝ առանձին վերցրած երկրում զբախտի կառուցում... Ուշադրութիւն դարձրէ՛ք էք, թէ ինչպէս են մեզանում բացատրում ցանկացած երեւոյթ: օտարերկրեայ վարկերի անհետացումից մինչեւ անհետեւ օրէնքների ընդունումը՝ «Ստանան գիտի»: Ահա հայրենի քաղաքական գործիչների շուրթերից առաւել յաճախ հնչող բացատրութիւնը:

Հարցումները ցոյց են տալիս, որ նրանք բոլորը հաւատում են անդրաշխարհի ուժերին, չար աչքին, սեւ կատուներին, աստղագուշակական կանխատեսումներին: Եւ նրանց հասկանալ, ի հարկէ, կարելի է: Գերբնական ուժերն, անկասկած, միջմտում են մեր կեանքին: Այլ կերպ անհնար է բացատրել, թէ ինչու ենք այդքան խելօք եւ, այնուհանդերձ, այսքան աղքատ:

Բայց կարեւորն այն է, որ նոյնիսկ այս պայմաններում շարունակում ենք յարողութեամբ գոյատեւել: Այո, մեր ժողովրդի կենսունակութեան եւ դեմացկունութեան մասին առասպելներ են պատում: Վերջին տարիները ողջ աշխարհին ցոյց տուեցին, որ անշիջանելի ենք, ինչպէս խաւարասէրները:

Ինչով սես մեզ չեն փորձել ոչնչացա-

նել հայրենի իշխանութիւնները: Եւ սովոր, եւ ցրտով, եւ լոյսի, աշխատանքի, թոշակի բացակայութեամբ, եւ ապուշ օրէնքներով... Բայց այդպէս էլ ոչինչ չկարողացան մեզ հետ անել:

Մենք կենդանի ենք, եւ որքան էլ որ դա տարօրինակ է՝ նոյնիսկ յարողութեամբ բազմաճանաչում ենք:

Այսպիսի մի անեկոտ կայ: Մի գիւղում մարդ է մահանում ու նրան տանում են թաղելու: Բայց ճանապարհին պատահաբար դազաղը գցում են, եւ մարդը դուր է ընկնում միջից: Հարթած թրաքթօր վարողը իր բազմաթոննանոց մեքենայով պատահաբար անցնում է նրա վրայով:

Վախենալով, որ մարդ է սպանել, թրաքթօր վարողը մարմինը լիճն է գցում: Որսագողերը լճում ձուկ էին բռնում ու պատահաբար տինամիթով արկղը պայթեցնում են լճի յատակում արդէն մէկ շաբաթ գտնուող մարմնի կողքին:

Մարմինը ջրի երես է ելնում, իսկ որսագողերը սարսափից կապում են նրան սահմանափակ ու փախում: Սահմանափակները նկատելով սահմանախախտին, նրա վրայ խոշոր տրամաչափի գնդացրից երկար կրակահերթ են արձակում, իսկ յետոյ գնդակահարում ականանտներին:

Յետոյ գլխի ընկնելով, որ դա, այնուհանդերձ, խաղաղ բնակիչ էր, տանում են նրան հիւանդանոց: Բժիշկը դուրս գալով վիրահատարանից, մանրազնին կերպով սրբում-չորացնում է ձեռքերն ու յոգնած ձայնով ասում.

- Կ'ապրի:

Այս անեկոտի մէջ ողջ Հայաստանն է: Այս թէ ինչպիսին է նա՞ իսկական հայ:

ՎԱՐԳԱՆ ԲԱՐՍԵՂԵԱՆ «Հայոց Աշխարհ»

ԽՈՋԱԼՈՒԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ ՄՈՒԹԱԼԻՊՈՎԻ «ՈՒՇԱՅԱԾ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ»

Փետրուարի 26ին լրանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Ասկերանի շրջանի Խոջալու գիւղում տեղի ունեցած ողբերգութեան 10 տարին: Դա, անտարակոյս, ողբերգութիւն էր, որովհետեւ խլեց կեանք 600 մարդու կեանք: 1992 թուականի փետրուարը դարաբաղա-ազըրպէյճանական պատերազմի ամենախիժ շրջանն էր: Ազրպէյճանական զինուած խմբաւորումներն բռնազրաւել էին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան մարդիկ տարածքի համարեա կէսը, Խոջալուից, Աղտամից գիշեր-ցերեկ հրթիռահարում էին մայրաքաղաք Ստեփանակերտը, միւս բնակավայրերը: Ղարաբաղը խեղդուում էր:

Արդէն 1992 թուականի Ապրիլին այն ժամանակ Նախիջևանի ինքնավար Հանրապետութեան խորհրդարանի նախագահն անձամբ խոստովանել էր, որ Խոջալուի իրադարձութիւններում մեղաւոր է Ազըրպէյճանի նախկին ղեկավար Այազ Մուլախիյովը: Համաձայն ազրպէյճանական «Պիլիք տիւնիա» գործակալութեան, Նախիջևանում Ալիեան շնակաւօրէն յայտարարել է. «Արիւնահեղութիւնը մեր օգտին կը լինի: Մենք պէտք չէ խառնուենք իրադարձութիւնների ընթացքին»:

Խոջալուի ողբերգութիւնը, ցաօք, տասը տարի շարունակ օգտագործուած է ներքաղաքական նպատակներով: Տիրակալ արեւելեան Ազրպէյճանում յանրապետական դաւերի եւ իշխանութեան համար պայքարի շահարկում է անմեղ

«Ողբերգութիւնն իրականացրել են Ազրպէյճանի իշխանութիւնները, բարձրաստիճանային ինչ-որ մէկը»:

«Նեգալիսիմայա Կազեթա»-ի օրերս տուած հարցազրույցում Ազրպէյճանի նախկին նախագահ Այազ Մուլախիյովը պնդում է, որ եթէ ընդդիմութիւնը՝ ժողովրդային ձակատը, չխոչընդոտէր ստորագրելու ազրպէյճանական բանակն ԱՊՀ-ի գլխաւոր հրամանատարութեանը միաւորելու համարայնադիր, ապա Խոջալուի ողբերգութիւնը չէր լինի: Յօդուածը վերնագրուած է «Ուշացած խոստովանութիւն»: Մուլախիյովը տասնեակ անգամ այլ առիթներով պնդել է, որ Խոջալուից մարդկանց հեռանալու համար հայեր միջանցք էին թողել, սակայն ժողովրդային ձակատի զինուած ստորաբաժանումներն Աղտամի շրջանի սահմանի մատուցներում գնդակահարել են խաղաղ բնակիչների շարասիւնը:

Ժողովրդային ձակատի իրականացրած Խոջալուի սպանդի գոհը դարձան շուրջ 600 ազըրպէյճանցի կանայք, ծեղրեր, երեխաներ: Խոջալուում ազրպէյճանցի «ճակատայինները» գահաբար սպաննեցին 34 խաղաղ հայ բնակիչներին:

Թ. Հ. «Ազգ»

ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՌԻՇԿԻՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»-ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէ կը խնդրուի ծանուցումի բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագայից) նախընտրաբար պաշտօնակա թուղթի վրայ, եւ՝ հաստատում) ցերկայացնել «Ազգակ»-ի ծանուցումներու գրասենյակը:

Լիբանանում Մահու

ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ՝ ԳՈՐԾԱԴՈՒՆԵՐՈՒ ԵՒ ՏԱԳՆԱՊՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Ատհալի արձա- կուրդն էտք վարչապետ Ռաֆիք Հարիրիի կառավարությանը տեղակալ մակարդակի վրայ կը դիմագրաւէ բաւական երկարակամացած շաբաթ մը: Արձակուրդը ստեղծուած էր քաղաքական բոլոր գործու- նէութիւնները եւ որոշ չափով սքողած էր ընկերա- յին-տնտեսական տագ- նապը, որ հետեւանք է տուրքերու թղթածախ- րին բացուելուն եւ այն օրէնքներուն, որոնք տայէ աւելի կ'առնեն:

Մարոնիներու պատ- ըրիարք Նասրալլա Սֆէյր իր կիրակի օրուան քա- ռոզին մէջ անդրադար- ձաւ Լիբանանի ընկերա- յին դժուարութիւննե- ռուն՝ կոչ ուղղելով, որ գործադուլի սպառնա- լիքները նկատի առնու- լին: Այս նիւթին շուրջ պատրիարքին կանխեց հանրապետութեան միւլթի Մոհամէտ Ռա- շիտ Քապպանի՝ Ատհա- տաւորական Համադաշ- նակութիւնը՝ յառաջի- կայ Հինգշաբթի (այսօր) նախատեսուած գործա- դուլը ջնջելու, հիմնուե- լով իրապաշտ լուծումնե- ռու վրայ, մինչ Աշխատա- տարական Համադաշնակ- ցութեան նախագահը, որ կ'ամբաստանուի իշխա- նութիւններուն հետ սերտ յարաբերութիւն- ներ ունենալու յանցան- քով, հանդիպումներ ու- նեցաւ աշխատաւորա- կան շրջանակներու հետ՝ հաստատելով, որ գործա- դուլի որոշումը անգառ- նայի է, բացի եթէ որ- դեգրուին անմիջական միջոցառումներ՝ ներկա- ցացուած պահանջներուն գոհացում տալու համար:

Ներկայացուած պա- հանջներուն գործնական ընդառաջումը դժուար ըլլալով հանդերձ, որոշ պահանջներ շրջանակ- ներ կը վստահան, որ յա- յարարուած պահանջնե- ռը միայն իրենք չըլլան բողոքի աճող շարժում- ներուն շարժիչը՝ այդ շարժումներուն նախա- ձեռնողներուն քաղաքա- կան եւ կազմակերպա- կան պատկանելիութե- նէն մեկնելով:

Վարչապետ Ռաֆիք Հարիրի եւ աշխատանքի նախարար Ալի Քանսո կը յուսան համոզել Աշխա- տաւորական Համադաշ- նակութիւնը՝ յառաջի- կայ Հինգշաբթի (այսօր) նախատեսուած գործա- դուլը ջնջելու, հիմնուե- լով իրապաշտ լուծումնե- ռու վրայ, մինչ Աշխատա- տարական Համադաշնակ- ցութեան նախագահը, որ կ'ամբաստանուի իշխա- նութիւններուն հետ սերտ յարաբերութիւն- ներ ունենալու յանցան- քով, հանդիպումներ ու- նեցաւ աշխատաւորա- կան շրջանակներու հետ՝ հաստատելով, որ գործա- դուլի որոշումը անգառ- նայի է, բացի եթէ որ- դեգրուին անմիջական միջոցառումներ՝ ներկա- ցացուած պահանջներուն գոհացում տալու համար:

Կրօնաւորներու զգու- շացումները քաղաքացի- ներու ամենօրեայ տագ- նապները լսելի դարձնե- լու միջոցներ չեն լուր, ինչ- պէս անոնցմէ մէկը բաժ- է պաշտօնական հեղինա- կութիւններու, այլ զգու- շացում մըն է «ըսէ՛ք ինչ որ կ'ուզէք, կ'ընենք ինչ որ կ'ուզենք» քաղաքա- կանութեան շարունա- կութեան:

Այս մէկը առիթ կ'ըն- ձեռնէ զանազան ազդակ- ներուն, որ մուտք գործեն բեմ, ինչ որ կրնայ գոր- ծադուլը ընկերային- տնտեսական արդար պահանջներ իրագործե- լու մղող շարժումնէ վե- ռածել հանդարտ քաղա- քական ճահիճներու շարժման աշխատանքի, ներկայ քաղաքական կա- յունութիւնը վտանգելու նպատակով՝ հասնելու համար գոց դռներու բա- յարմին, շրջանային ան- յարմար միջոցառումի մը մէջ:

ԱՐԱՔԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ՝ ԱՆԵԼԻ ԴԻՄԱՅ

Հուսմէն վերադարձին վարչապետ Ռաֆիք Հա- ռիրիի արաբելիստայնէ- րան տագնապի մասին երկար խօսակցութիւնը բացայայտեց կարգ մը ծախքեր՝ կապուած Պէյ- րութի մէջ կայանալիք արաբական վեհաժողո- վին:

Դիւանապետական աղ- բիւրներ կը յայտնեն, որ հաւանաբար վեհաժողո- վը տեղի կ'ունենայ 1981 թուականին Սէուտական Արաբիոյ գահակալ Ֆահտ թագաւորի յայ- տարութեան ներքին զգուշացումներուն հիման վրայ, յայտարարութիւն մը, որ այն ժամանակ կոչ- ւեցաւ «Ֆահտ թագաւորի ծրագիր», որ կոչ կ'ուղղէր ամբողջական եւ արդար խաղաղու- թեան՝ միջազգային որո- շումները գործադրելու միջոցով:

Միւս աղբիւրները կը նկատեն, որ Ապտալա իշխանին յայտարարու- թիւնը կրնայ վերածուել արաբական վեհաժողո- վին յայտարարութեան կամ Պէյրութի յայտարար- րութեան նախագիծի, սակայն խնդիրը կանգ չէ առած պաղեստինեան պահանջներուն եւ պաղես- տինցի ղեկավար Եսաէր Արաֆատի մասնակցու- թեան վրայ, այլ կանգ բերուած է Իսրայէլի եւ անոր կեցուածքին վրայ, որ վարչապետ Հարիրի փորձեց բացատ- րել իր վերջին զրոյցին ըն- թացքին:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԿԸ ՓՈՐՁԵՆ ԺԵՂՈՐՈՇԵԼ ԻՐԵՆՑ ԻՐԱՎԻՃԱԿՆ ՈՒ ՎԱՐՑԵՐԸ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ ԿԱՅ ՆԻԻԹԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ ԵՒ «ԶԿԱՅ»Ն ԿԸ ՄՆԱՅ ԱՄԷՆԷՆ ՏԱՐԱԾՈՒԱԾ ԲԱՌԸ

Երիտասարդները խօսին իրենց իրավիճա- կին եւ հարցերուն մասին, խառնաշփոթ կա- ցութիւն մը կը ստեղծուի. ըստ սովորակա- նին, քաղաքականն ու տնտեսականը, յոյսն ու յու- սախարութիւնը, պատասխանատուութիւնն ու ան- կէ փախչիլը, խոստովանութիւնն ու սուտը կը միա- խառնուին իրարու. բոլորը իրարու հակասող երե- լոյցներ են, հակասութիւններով լեցուն իրավիճակի մը իրեւ արդիւնք արձանագրուած եւ յառաջացած՝ հակասութեամբ լեցուն անցեալէ մը, ու այս բոլորը կը մղեն ապագայի մը, որ այս բոլորէն տարբեր է:



մօտ ու ծանօթ են քաղաքական կեանքին, քան՝ աղ- ջիկները:

Երիտասարդներէն ոմանք զանազան պատճառնե- ռով մտահոգ են իրենց ապագայով, որովհետեւ անո- ռոշուած չեն իրենց մէջ: Քաղաքական եւ տնտեսական պատճառներով չէ միայն, որ երիտասարդները կ'ուզեն գաղթել եւ իրենց կեանքն ու ապագան շարունակել այլ երկրի մէջ: Այս պատճառներուն կողքին կ'աւելնայ նաեւ ինքնու- թիւնը փաստելու անկարելիութիւնը եւ բախումը՝ առկայ կացութեան հետ. ասոնց կը միանայ նաեւ այն, որ ճշդուած չէ երիտասարդներուն ընկերային դերա- կատարութիւնը: Երիտասարդներէն շատեր չեն գի- տեր իրենց ովքեր ըլլալը կամ իրենց ապագայի հեռանդ- կարն ու կեանքի տեսլականը: Անոնք միշտ կը շփո- թեն իրականութեան եւ երազին, կարելիին եւ անկա- րելիին միջեւ:

Նկատելի է, որ սեռային մարզին մէջ առկայ ար- գեքները երկու սեռերուն մօտ գրաւած են հարցե- ռուն վերջին դիրքը: Այս կը նշանակէ, թէ երիտա- սարդները այդ մարզին մէջ հարցեր չունին եւ Լիբա- նանի մէջ անհրաժեշտ ազատութիւնը կայ այս կամ այն ձեւով, եւ կամ երիտասարդները չեն ուզեր ըսել, թէ իրենց համար այս մէկը հիմնական հարց է:

Յայտնենք, թէ նման հարցաթերթիկ մը պատ- րաստուած էր տոթթ. Ղասսան Եագուպի կողմէ 1989 թուականին եւ հարցախոյզը տեւած է 1989էն 1993 եւ տուած է Ա. եւ Բ. տախտակներուն մէջ նշուած ար- դիւնքները:

դասա- տրում	հարցերը տողոց մօտ	տոկոսը (%)
1-ին	ընդվզում Գերկայ կացութեան	41
2-րդ	վախ ապագայի Գկատմամբ (անգործութիւն)	40
3-րդ	Գիրթական - տնտեսական տագնապ	34
4-րդ	ընտելանալու դժուարութիւն	28
5-րդ	ասպարէզի ընտրութեան դժուարութիւն	19

Ա. տախտակ՝ 1993ի արդիւնքները:

Վերջերս կատարուած հարցախոյզին նպատակն էր գիտնալ, թէ տարիներու ընթացքին որքանով փոխուած են երիտասարդներուն հարցերն ու տեսա- կէտները: Արդիւնքներուն բաղադրութեամբ կը գիտ- նանք, թէ հարցերը նոյնը կը մնան երկու սեռերուն միջեւ, սակայն անոնց դասաւորումը փոխուած է. օրինակ՝ եթէ 1993ին նիւթական-տնտեսական տագ- նապը կը գտնուէր երրորդ դիրքի վրայ, այսօր անի- կա բարձրացած է առաջին դիրք: Այս երեւոյթը ցոյց կու տայ, որ երիտասարդները, եթէ նոյնիսկ արտադ- րողական մարզին մէջ չեն մտած տակաւին, կը դի- մագրաւեն ապրուստի եւ տնտեսութեան ահաւոր հարցեր:

դասա- տրում	հարցերը տողոց մօտ	տոկոսը (%)
1-ին	Գիրթական - տնտեսական տագնապ	36
2-րդ	ընդվզում Գերկայ կացութեան	28
3-րդ	Կատարութեան Գնդեպ անվստահութիւն	22
4-րդ	Անգործութիւն - ասպարէզի ընտրութեան դժուարութիւն	18
5-րդ	Ընկնուածութիւն	18
11-րդ	սեռային ազատութիւն Գնդեպ արգելքներ	45

Գ. տախտակ՝ 2002ի արդիւնքները:

օգնական նկատմամբ, որ գիրքը ուրիշ երկիր պի- տի փոխադրէ:

«ԶԿայ»ն ամէնէն տարածուած եւ լուծած բառե- ռէն մէկն է անոնց մօտ: Անոնց քով վստահութիւն չկայ իշխանութեան նկատմամբ, կրթական համա- կարգին նկատմամբ, չկայ կարելիութիւն բնական

դասա- տրում	հարցերը աղջիկներուն մօտ	տոկոսը (%)
1-ին	վախ ապագայի Գկատմամբ	39
2-րդ	ընդվզում Գերկայ կացութեան	35
3-րդ	Գիրթական - տնտեսական տագնապ	28
4-րդ	ընտելանալու դժուարութիւն	25
5-րդ	ասպարէզի ընտրութեան դժուարութիւն	24

Բ. տախտակ՝ 1993ի արդիւնքները:

Հարցախոյզին կը պարզուի նաեւ, թէ տիրող կա- ցութիւններուն դէմ ընդվզումի ալիքը միշտ առկայ եղած է երիտասարդներուն մօտ, այս կը նշանակէ, թէ այսօր երիտասարդութիւնը նոյնքան ընդվզած է, որքան՝ քաղաքացիական պատերազմի տարիներուն: Այսօր փոխուած է այն, որ իտեպ անձեր գոյութիւն չունին այլեւս եւ խառնաշփոթներուն տի- պար պատկերը, որովհետեւ նոր սերունդը ոչ մէկ ձե- լով կը վստահի կատարութեան եւ ներկայ իշխա- նութիւններուն, եւ այդ պատճառով ալ անիկա կը գտնուի հոգեկան եւ գաղափարախօսական պարա- պութեան դիմաց: Այս կացութիւնը կը յառաջանայ այն իրողութեանէն, որ այսօր երիտասարդները ներ- կայ անտանելի կացութեան պատասխանատուն կը նկատեն իշխանութեան վրայ գտնուողները. նկատե- լի է նաեւ, որ արական սեռի պատկանողները աւելի

դասա- տրում	հարցերը աղջիկներուն մօտ	տոկոսը (%)
1-ին	Գիրթական - տնտեսական տագնապ	44
2-րդ	ընդվզում Գերկայ կացութեան	24
3-րդ	ասպարէզի ընտրութեան դժուարութիւն	22
4-րդ	Ընկնուածութիւն	20
5-րդ	Կատարութեան Գնդեպ անվստահութիւն	18
11-րդ	սեռային ազատութիւն Գնդեպ արգելքներ	62


Դ. տախտակ՝ 2002ի արդիւնքները:

կեանք ապրելու եւ ապագայ կերտելու: Այս «չկայ»ն երիտասարդներուն մօտ եղած պարապութեան երե- լոյթի արտայայտութիւնն է, եւ անիկա ոչ մէկ բա- նով կը լեցուի եւ կը մղէ այլատեսան ու կորուստի:

ՌԱՆԻ ՊԻԹԱՐ

«Սաֆիր»

Կնոջական



ՆՈՐԱԶԵԻՈՒԹԵԱՆ ԱԶԽԱՐԸՆ ԼԻԲԱՆԱՆՑԻ ԶԵՒԱԳԻՏ ՌՈՊԷՐ ԱՊԻ ՆԱՏԻՐ

Ռոպեր Ապի Նատերի երազը իրականացավ: Աշխարհի մեծագույն ձեռագիտներու կարգին, վերջերս, ան Փարիզի «Էմֆիթրիալ» սրահին մէջ ցուցադրեց իր վերջին հաւաքածոն:



Ձեռագիտ Ռ. Ապի Նատեր:

Աշխատասէր, փառասէր այս երիտասարդը մէկ օրէն միւսը չի բարկանալու: Արդարեւ, փոքր տարիքէն Ռոպեր կ'ընկերանար իր վայելուչ մօրը՝ դերձակուհիին աշխատանոցը եւ կ'օգնէր մօրը՝ կտորի եւ ձեւի ընտրութեան մէջ:

15 տարեկանին ան մեկնած է Փարիզ եւ հետեւած է նորաձեւութեան եւ ձեւագիտութեան դասընթացներուն: Աշխատած է Իվ Սէն Լօրան եւ Քլօտ Մոնթանա նորաձեւութեան տուններուն մէջ եւ մերթ ընդ մերթ Պէյրութ այցելելով ցուցադրած է իր հաւաքածոնները:

Ներկայիս Ռոպեր Ապի Նատեր վերջնականապէս Լիբանան հաստատուած է եւ ունի նորաձեւութեան տունը:

Ձեռագիտին խոստովանութեամբ, փառքի ճամբան շատ ալ դիւրին եղած չէ, նախ եւ առջ ան լաւապէս ուսումնասիրած է արաբական աշխարհի ճաշակն ու պահանջները եւ ալ մարզին մէջ մեծ ներդրում կատարած է, ապա հայեացքը ուղղած է դէպի Եւրոպա եւ քայլ առ քայլ հասած է այսօրուան փառքին:

Ռոպեր Ապի Նատեր հագուստներ կը յղանայ բոլոր այն կիներուն համար, որոնք վայելչութիւնը կը սիրեն եւ կը համարձակին ուշադրութիւն զրաւող հագուստներ հագնել:

Բայց եւ այնպէս ձեւագիտը յաճախ նկատի կ'առնէ յաճախորդներին կարծիքը, միջավայրը, մտածելակերպը, եւ այլն:

Նորաձեւութեան աշխարհին մէջ մրցակցութիւնը մեծ է, բայց լիբանանցի ձեւագիտը կը փորձէ միշտ նորութիւն բերել, մեծերը չընդօրինակել եւ ոչ ալ անոնց հետ չափուիլ:

Ապի Նատեր կը յուսայ, որ յաջողութիւնը պիտի չլիցնէ զինքը, եւ թէ ներկայիս մեծ պատասխանատուութիւններ ունի, պէտք է պահել իր մակարդակը եւ դիրքը նորաձեւութեան հսկաներուն մէջ:

Ինչ կը վերաբերի միջազգային եւ արաբական մամուլի արձագանգներուն, Ապի Նատեր կը յայտնէ, թէ եւրոպական մամուլը զրական անդրադարձ ունեցաւ Փարիզի իր փառատօնին առիթով, յատկապէս գնահատելով ձեւագիտին կտորներուն, կերպաներուն ընտրութիւնն ու գործածութիւնը:

Բայց ձեւագիտին կարծիքով, արաբական եւ լիբանանեան մամուլը հազուադէպօրէն կ'անդրադարձան իր եւ իր նմաններուն յաջողութիւններուն եւ լուսարձակի տակ կ'առնէ եւրոպական եւ ամերիկեան նորաձեւութիւնը:

Վերջապէս, ինչ կը վերաբերի պսակի հագուստներուն, Ռոպեր Ապի Նատեր կը յայտնէ, թէ այս տարի ժիւլիօնները նորոյթ չեն, այլ՝ թափուն, ուսմանքի հագուստները: Թիւիթը ալ որքան որ պարզ են, նոյնքան ալ երկար են: Ձեւագիտը յղացած է պրոնզ, վարդագոյն, «Էրիլ» հարսանեկան հագուստներ, բայց իր կարծիքով, ճերմակը անփոխարինելի գոյնը կը մնայ անկասկած:



Նմուշներ Ռոպեր Ապի Նատերի յղացումներէն:

ՓՈՐՁ-ՆԱՐՑԱՐԱՆ

ՈՐՔԱՆՈ՞Վ ԱՆԿԱՆ ԱՆՉ ՄԵՆ ԷՔ

Արդեօք անկախ եւ ինքնարաւ աճած մըն էք, թէ յաճախ նեցուկի մը պէտք ունիք ձեր կեանքին մէջ: Իմանալու համար պատասխանեցէ՛ք 15 հարցումներուն՝ տեւաբար ընտրելով հաւանական 3 պատասխաններէն յարմարագոյնը: ապա ցուցատախտակին վրայ հաշուեցէ՛ք ձեր ապահոված գումարը եւ, վերջապէս, կարդացէ՛ք արդիւնքը:

որ գէշ կը հոտի: - 9 - ● Եթէ մոզական գաւազանով մը վերածուէ՛ք երազային հակի մը, պիտի փորձէ՛ք... Ա.- Հմայել աշխարհի ամէնէն գեղեցիկ այրերը: Բ.- Հմայել մեծահարուստ եւ հզօր անձնաւորութիւն մը: Գ.- Հմայել պարզապէս ձեր սիրած անձը:

- 1 - ● Ձեզի համար յոռեզոյն կացութիւնը կը ստեղծուի... Ա.- Եթէ ստիպուիք աշխատիլ՝ ապրելու համար: Բ.- Եթէ չկարենաք ձեր ապրուստը հոգալ: Գ.- Եթէ ուրիշը ծախսէ ձեր վրայ:

- 10 - ● Ձեր ամուսինը կը խոստովանի, որ նիւթական դժուարութեան մատնուած է եւ բնականաբար ծախսերը որոշ սեղմումներու պէտք է ենթարկել... Ա.- Կը տագնապեք եւ կը մտահոգուիք: Բ.- Ձինք կը մխիթարէք եւ կը յուսադէք: Գ.- Կը խոստանաք աշխատիլ եւ ելք մը գտնել:

- 2 - ● Երբ փոքր էիք, կ'երագէիք... Ա.- Օգնել բոլոր թշուառներուն: Բ.- Պարուհիի ձեր ապրելիքին մասին: Գ.- Ձեր ապագայ ընկերոջ մասին:

- 11 - ● Ձեր նախասիրած նախադասութիւնն է... Ա.- Տկար օղակն է՞ք՝ ցտեսութիւն: Բ.- Վերջին խօսքն է: Գ.- Միութիւնը զօրութիւն է:

- 3 - ● Կը պատահէ՞, որ ձեր զրամը մինչեւ ամսուան վերջը չըրաւէ եւ մէջտեղ մնայ: Ա.- Երբեք: Բ.- Յաճախ: Գ.- Գրեթէ միշտ:

- 12 - ● Լոթոյի մեծ պարզելը կը շահէք... Ա.- Ձեզի ապահովութիւն մը կու տայ: Բ.- Ձեզի հեղինակութիւն մը կու տայ: Գ.- Անմիջապէս կը մտածէք՝ ինչպէս կը թափանցի ձեր սիրտը:

- 4 - ● Ձէք սիրեր առանձին... Ա.- Ծամբորդել: Բ.- Պսակի մը ներկայ գտնուիլ: Գ.- Գնում ընել:

- 13 - ● Ձեր կարծիքով, տան մէջ ալ մարդուն պարտականութիւնն է... Ա.- Ծախսերը հոգալ եւ խանգարումները նորոգել: Բ.- Ձեր քմահաճոյքներուն գոհացում տալ: Գ.- Ձեզի հետ տան պատասխանատուութիւնները բաժնել:

- 5 - ● Ամուսնութեան առաջարկ կը ստանաք... Ա.- Անմիջապէս կ'ընդունիք: Բ.- Մտածելու ժամանակ կը պահանջէք: Գ.- Ինչո՞ւ չէ, կ'ընդունիք:

- 14 - ● Եթէ ծաղիկի վերածուէ՛ք... Ա.- Պիտի դառնայիք ազնուական եւ համեստ շուշան մը: Բ.- Պիտի դառնայիք վայելուչ կակաչ մը: Գ.- Պիտի դառնայիք սրտերը այրող վարդ մը:

- 6 - ● Փոքր տարիքին, երբ կը խաղալիք... Ա.- Խուստի ղեկավար էիք եւ բոլորը կը հնազանդէին ձեզի: Բ.- Բոլորին մտահոգութիւնն էր ձեզ ուրախացնել եւ գոհ ձգել: Գ.- Փոխն ի փոխ բոլորն ալ կը ղեկավարէին խաղը:

- 15 - ● Ձէք հանդուրժեք, որ ձեր սիրած անձը քննադատէ... Ա.- Ինքնաշարժ քշելու ձեւը: Բ.- Ձեր ասպարէզը: Գ.- Ծախսելու եղանակը:

- 7 - ● Եթէ որոշէք ամէն բան ձեզի եւ մեկնիլ աշխարհին միւս ծայրը... Ա.- Ափրիկէի մէջ բարեփոխական միութեան մը կ'անդամակցէիք: Բ.- Մեծահարուստի մը հետ ձեր կեանքը կը վերակազմէիք: Գ.- Ամազոնի մէջ արկածախնդրական արշավի մը կը ձեռնարկէիք:

- 8 - ● Ընտանի կենդանի մը, գոր չէք հանդուրժեք... Ա.- Թուրքի մը, որ տեւաբար ձեր բառերը կը կրկնէ: Բ.- Շուն մը, որ տիրոջէն չի կրնար բաժնուիլ: Գ.- Կարմիր ձկնիկ մը,

	ա	բ	գ
1	3	1	2
2	2	1	3
3	1	2	3
4	2	1	3
5	3	1	2
6	1	3	2
7	2	1	3
8	3	1	2
9	1	3	2
10	3	2	1
11	1	2	3
12	3	1	2
13	3	1	2
14	1	2	3
15	2	1	3

ԱՐԳԻՒՆԷՔ ● Եթէ 22 կետէն պակաս

ՄԱՏԱԳ

Մատաղը մեր օրերուն կորսնցուցած է իր ցշաճակութիւնը: Յաճախ ան կը վերածուի խնոյքի, որուն աւարտին գիտով անձեր մոռցած իսկ կ'ըլլան հաւաքոյթի պատճառը...:


Մատաղը կ'ըլլայ շնորհակալական եւ կը կոչուի «աղքատաց կերակուր»: Շնորհակալական մատաղ կը կատարուի, երբ որեւէ տհաճ պատահարէ կը փրկուիք կամ մեղութեան մը կը ձեռքազատուիք, կամ՝ երբ մեր փափաքը կ'իրականանայ:

Մատաղը պէտք է մաքուր սրտով կատարել, եթէ ոեւէ մէկուն հետ քէն ենք, մատաղ ընելէ առաջ պէտք է հաշտուիք:

Մատաղը պէտք է բաժնել աղքատներուն, ծերերուն (ծերանոցներուն), հիւանդներուն, որբանոցներուն եւ արարողութիւնը երբեք չվերածել խնոյքի: Մատաղի ժամանակ որեւէ ոգելից ըմպելի պէտք չէ գործածել:

Մատաղը անպայմանօրէն գոհ մատուցել, անասուն մորթել չէ, այլ՝ անոր արժեքին չափով դրամ տալ աղքատ ընտանիքի մը, ծերանոցին, որբանոցին կամ բարեսիրական որեւէ հաստատութեան:

ԽՈՒՍԱԳԻՐ ԲՐԻՆՁՈՎ ԱՆԱՆԱՍ



4 անձի համար անհրաժեշտ են... 100 կրամ կլոր բրինձ մէկ կիտրոն Երես մը պահածոյ անանաս Ապուրի դգալ մը առանց կուտի չամիչ 40 կրամ փոշի շաքար Պտղունց մը վանիլ Ապուրի 2 դգալ փոշի շաքար գարդարանքի համար Հակիթ մը, առաւել 2 դեղնուց 40 սանթիլիթր կաթ 5 սանթիլիթր ռոմ խմիչք 2 պտղունց աղ Տապակոցի ձէթ

Պատրաստութիւն Կիտրոնը լուալ, ապա շատ բարակ կեղուել՝ շուրջ 8 սմ. երկայնքով:

Երեսը շուրջ մէկ բրինձը քիչ - քիչ աւելցնել եւ 5 վայրկեան եփել, ապա քամոցէ անցնել:

Բրինձը փոխադրել խորունկ տապակի մը մէջ, աւելցնել կաթը, կիտրոնի հեղուկը, փոշի շաքարը, աղը: Երեսը, ապա կրակը թթեցնել եւ 25 վայրկեան եփել, մինչեւ որ բրինձը ամբողջ կաթը ծծէ:

Կրակին վրայէն վերցնել, հակիթը եւ 2 դեղնուցները, խորանարդածեւ կտրտուած անանասը, չամիչը եւ ռոմը: Ձգել, որ պողի 2 ժամ՝ սառնարանը պահելով:

Տապակի մը մէջ տաքցնել ձէթը, դգալով մը մաս - մաս առնել խառնուրդէն եւ տաք ձէթին մէջ սահեցընել զգուշօրէն: Ձգել, որ ուռնի եւ 5 վայրկեան 2 երեսով տապակել:

Տապակուած կտորները փոխադրել ծծուն թուղթի վրայ, ապա շարել ներկայիս խամանի մը մէջ, երեսը փոշի շաքար ցանել եւ հրամցնել:

ՍՆՆՂԱԳԻՏԱԿԱՆ Ի՞ՆՉ ՈՒՏԵՆԼ ԳԵՂԵՑԻԿ ՄՈՐԹ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ


տուութիւն պէտք է տալ փայլուն եւ առողջ մորթ ունենալու համար: նեղէնին, հացահատիկին, ցորենի ծիլին եւ կաղամբին:

● ԻՒՂՈՏ ՄՈՐԹԸ յաճախ կը փայլի, ծակտիկ-նեքը կ'ընդլայնին, բշտիկներ կը յայտնուին եւ «սեւ կէտեր» կը բազմանան: Նմանօրինակ մորթեր պէտք ունին հիմնական պէտք ունին գիւղի եւ Պէ. կենսանիւթի: Հետեւաբար առատօրէն պէտք է ուտել բուսական ձէթ, նուշ, կատալ ծովային պտուղներ, ընկույզ, իւղոտ ձուրուն, միսին, հակիթի կեր, գետնախնձոր, լո՞ղեղնուցին, թթիմորին, լիկ, ծիրան, պանան, սո՞ճերմակ լուբիային, կաթ-

Պատրաստեց ՇՈՒՇԻԿ ՍԱԻԻԱԳԱԼԵԱՆ

Շ.Բ.Ը.Ս. Շ.Ե.Ը. Վ. ՓԱՓԱՉԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ Կը ներկայացնէ՝ ԷՏՈՒԱՐՏՕ ՏԸ ՃԻԼԻՓՓՈԻ «ԵՐԵՒԱՆԵՐԸ ԿԸ ՄՆԱՆ ԵՐԵՒԱՆԵՐ» ԲԵՍԱԳՐՈՒԹԵԱՄԸ Շ. Շ. Արուեստի վաստակաւոր գործիչ, Պետական մրցանակի դափնեկիր՝ ՓՐՈՑ. ԵՐՈՒԱՆԻ ԴԱԶԱՆՃԵԱԼԻ Տեղի կ'ուցենայ 28 Փետր. 1,2,3,7,8 (Կալի), 9, 10 Մարտ 2002, երեկոյեան ժամը ձիշո՞ 8:30ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» քաղաքապետի մէջ:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն ԱՇԽԱՐՀ



ՃԱՏՐԱԿ

ՄԻՋԱՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ ԱՂԶԿԱՆՑ ՃԱՏՐԱԿԻ ԱԽՈՅԵԱՆ

Երեքշաբթի, 26 Փետրուարին, Ֆրեյնեյրու Շրջանաւարտից Միութեան կեդրոնին մէջ (Ֆրեյն Շրպպեթ) վերջ գտաւ 2002ի Լիբանանի աղջկանց ճատրակի ախոյեանութիւնը, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասէն Սիւլան Մուրատեանի յաղթանակով:

Մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերին 6 վարպետուհիներ՝ միջազգային վարպետ Քնարիկ Մուրատեան, Սիւլան Մուրատեան, Եւմնա Մախլուֆ, Մայա Ժալլուլ, Ղատա Պէյք եւ Ռիտա Աուքալ:

Ախոյեանութեան գլխաւոր անակնկալը հանդիսացաւ 4րդ հանգրուանին Քնարիկ Մուրատեանի կրած պարտութիւնը Եւմնա Մախլուֆէն, ինչ որ պատճառ դարձաւ, որ Քնարիկ Մուրատեան 1995էն ի վեր առաջին անգամ ըլլալով նահանջէ ախոյեանութեան 3րդ դիրքը:

Նշենք, որ Սիւլան Մուրատեան Լիբանանի ախոյեան հանդիսացած է նաեւ 1995ին եւ 1999ին, իսկ Քնարիկ Մուրատեան՝ 1996, 1997, 1998, 2000 եւ 2001 տարիներուն:

Ստորեւ՝ ախոյեանութեան վերջնական դասաւորումը.

- 1.- Սիւլան Մուրատեան (Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս)
- 2.- Եւմնա Մախլուֆ (Ֆրեյնեյր)
- 3.- Քնարիկ Մուրատեան (Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս)
- 4.- Մայա Ժալլուլ (Ֆրեյնեյր)
- 5.- Ղատա Պէյք (Մաշարիի)
- 6.- Ռիտա Աուքալ (Անսար)

ԱԼԵՔՍ ՖԵՐԿԸՍԸՆ ԵՐԵՔ ՏԱՐԻՈՎ ԵՐԿԱՐԱԶԳԵՑ ԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ



Ռուտ Վան Լիսթըրոյ (ձախից) կը տօնէ իր ճշանակած 30րդ կողը:

Մանչեսթըր Եունայթըդի մարզիչ Ալեքս Ֆերկըսըն երէկ՝ 2րդ քաղաքի, երեք տարիով երկարաձրգեց իր պայմանագրութիւնը, յալոնեցին ակումբին պատասխանատուները:

60 տարեկան սկոտլանդացին, որ իր պաշտօնը ստանձնած էր 1986ին, իր նոր պայմանագրութեամբ 1 Յուլիս 2002էն մինչեւ 30 Յունիս 2005 պիտի մնայ իր ակումբին հետ: Նշենք, թէ անոր նախկին պայմանագրութիւնը կ'աւարտէր այս եղանակի աւարտին, որմէ ետք ան որոշած էր վերջ մը դնել մարզիչի իր ասպարէզին:

Անոր այս տուած որոշումը պատճառ դարձաւ, որ Մանչեսթըր նոր մարզիչի մը փնտրութիւնը աշխատանքներուն սկսի, սակայն անոր յաջորդը չգտնելով, ակումբին պատասխանատուները Փետրուար Տին յայտարարեցին, թէ կը փորձեն նոր պայմանագրութիւն մը կնքել Ֆերկըսընի հետ:

Բրիտանիոյ ֆութպոլի պատմութեան մէջ Ֆերկըսըն կը նկատուի ամենէն յաջող մարզիչը, ոչ թէ անոր համար, որ ափիկ կը նկատուի աշխարհի ամենէն հարուստ մարզիչներէն մէկը, այլ որովհետեւ ան իր կազմին հետ շահած է շատ մը տիտղոսներ: Անոնցմէ կարելի է նշել անգամ՝ աշխարհի ակումբներու ախոյեանութիւնը, մէկ անգամ՝ Եւրոպայի գերբաժակը, մէկ անգամ՝ Եւրոպայի բաժակը («Չէմփիրնզ Լիկ») եւ մէկ անգամ ալ՝ Անգլիոյ Լիկայի բաժակը: Անիկա շատ մը անգամներ շահած է նաեւ «Չէմփիրնզ Լիկ» տիտղոսը:

Նշենք, թէ նախքան Եունայթըդի միանալը, Ֆերկըսըն Ապրիլի մարզիչն էր, որուն հետ եւս ան շահած է շատ մը տիտղոսներ: Անոնցմէ կարելի է նշել անգամ՝ Սկոտլանդի ախոյեանութիւնը, որ անգամ Սկոտլանդի ախոյեանութիւնը, մէկ անգամ՝ Եւրոպայի բաժակը իր խումբերու բաժակը եւ մէկ անգամ ալ՝ Եւրոպայի գերբաժակը: Պէտք է նշել սակայն, որ Ֆերկըսըն իր պայմանագրութիւնը երկարաձրգեց այնպիսի պահու մը, երբ անոր կազմը կարելու քայլ մը առաւ դէպք քառորդ աւարտական հանգրուան, իր կատարած մրցումին ընթացքին 5-1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Նանքը:

Եունայթըդի կողմէն մէկը նշանակած Ռուտ Վան Լիսթըրոյ այսպիսով դարձաւ առաջին մարզիչը (ակումբին պատմութեան մէջ), որ Պրայըր Մաքլէրէն (1988) եղանակի մը ընթացքին կը հասնի 30 կողի սահմաններուն:

«ՉԵՄՓԻԸՆՉ ԼԻԿ»

ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏ ԸԱՍԱԻ ՔԱՌՈՐԴ ԱԲԱՐՏԱԿԱՆ

«Չէմփիրնզ Լիկ»ի ֆութպոլի մրցաշարքին Բ. հանգրուանի դարձի մրցումներուն, երէկ տեղի ունեցան չորս ճակատումներ՝ Գ. եւ Դ. խմբակներէն ներս:

Գ. խմբակին պարագլուխի դիրքը գրաւող Ռեալ Մատրիտ, յաջորդաբար չորրորդ մրցումն ըլլալով յաղթանակ արձանագրեց, 2-1 արդիւնքով յաղթական վերադառնալէ ետք Փորթոյի դաշտէն: Սանթիակո Սոլարի (6րդ) եւ Իվան Շելկուեթա (19րդ) նշանակեցին սպանական կազմին կողմէրը, իսկ Նունո Բափուչօ՝ Փորթոյի կողմ (26րդ):

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք Ռեալ Մատրիտ այսպիսով հանդիսացաւ առաջին խումբը, որ ապահովեց քառորդ աւարտականի իր տունը, ապահովելէ ետք առաւելագոյն 12

կէտերը:

Արսենալ եւ Տեփորթիօ Բորուսա իրենց արձանագրած յաղթանակներէն ետք, կարելու քայլ մը առին դէպք քառորդ աւարտական: Լա Բորուսա 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Եու-

վենթուր, իսկ Արսենալ՝ Պայեր Լեյքըրուզընը (4-1): Չորրորդ եւ վերջին մրցումը վերջ գտաւ Փանաթիկոս յաղթանակով, որ 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Սփարթա Փրական:

Ստորեւ՝ դասաւորումը.


	ԿԵՏ	ՆՇ.	ՍՏ.
1.- Մանչեսթըր Եունայթըտ	8	10	3
2.- Պայերն Միւնխի	8	3	1
3.- Պոլսիսթա	4	1	4
4.- Նանք	1	2	8
●Բ. ԽՄՔԱԿ			
1.- Ա. Էս. Ռոմա	6	5	2
2.- Պարսելոնա	5	6	7
3.- Կալաթասարայ	4	4	4
4.- Լիվըրքուլ	3	2	4
●Գ. ԽՄՔԱԿ			
1.- Ռեալ Մատրիտ	12	9	3
2.- Փանաթիկոս	7	4	4
3.- Սփարթա Փրակա	3	4	6
4.- Փորթո	1	1	3
●Դ. ԽՄՔԱԿ			
1.- Տեփորթիօ Բորուսա	7	4	3
2.- Արսենալ	7	8	5
3.- Եուվենթուս	4	5	5
4.- Պայեր Լեյքըրուզըն	4	5	9

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ԼԷՅՔԸՐԶ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵՑ ՊԱՔՍԸ՝ 99-89

Էն. Պի. Էյ. ի երէկւան մրցումներուն, Կեդրոնական զօտիի (Արեւելեան շրջան) պարագլուխի դիրքը գրաւող Միլուոքի Պաքս, 99-89 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր հիւրէն՝ Լոս Անճելըս Լէյքըրուզէն, որ կը գրաւէ խաղադաշտի զօտիի (Արեւմտեան շրջան) 2րդ դիրքը: Լէյքըրուզի մարզիկներէն Շաքիլ Օնիլ նշանակեց 28 կէտ եւ 13 ռիպաւնտ, իսկ անոր խմբակից Քուպէ Պրայընթ՝ 27 կէտ: Պաքսի մարզիկ Սէմ Բէքըլ նշանակեց 21 կէտ եւ 10 էսիսթ:

Սան Անթոնիոյի մէջ, Սփրըյ 99-91 արդիւնքով



Ճորտըն՝ մտահոգ

Յաղթական կազմին մարզիկներէն Թիմ Տանքըն նշանակեց 29 կէտ եւ 15 ռիպաւնտ: Տալասի մէջ, Մալքըրիքս 104-91 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Մեմֆիս Կրիպիդը: Իր կազմին արձանագրած յաղթանակէն մէջ իր կարելու քայլ մը առին Մայքլ Ֆիլմոյ, որ նշանակեց 30 կէտ, 8 ռիպաւնտ եւ 8 էսիսթ:

Իր կրած այս պարտութենէն ետք, Մեմֆիսի այս եղանակին արձանագրած արդիւնքը յար է նման եղաւ Շիքաօ Պոլսի, որ արձանագրած է 15 յաղթանակ եւ կրած՝ 41 պարտութիւն: Պոլսի իր իր պարտութիւնը կրեց Օրլանտո Մէճիքէն, 112-97 արդիւնքով: Մէճիքի մարզիկ Թրէյսի Մաքկրիյտի նշանակեց 25 կէտ, 9 ռիպաւնտ եւ 7 էսիսթ:



Թիմ Տանքըն՝ կողով մը ճշանակած պահունգ:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները.

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները:

Սթեյքըլ Սուփըրսոնիքս - Քլիվլենտ Քալիթր 109-89	Լոս Անճելըս Լէյքըրուզ - Միլուոքի Պաքս 99-89
Օրլանտո Մէճիք - Շիքաօ Պոլս 112-97	Մայս Մալքըրիքս - Մեմֆիս Կրիպիդ 104-91
Լոս Անճելըս Քլիփըր - Հիուսթըն Ռոքեթս 94-84	Սան Անթոնիո Սփրըյ - Տեքսաս Սթարս 99-91
Սաքրամենթո Քլիփըր - Եուրա Ճէյ 107-81	

ՊԱՔԵԹՊՈԼ

ԳԱՅԻՐԵԻ Յ.Մ.Ը.Մ.Ի «ԱՐԱՐԱՏ» ԽՈՒՄԲԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ՝ ՊԵՅՐՈՒԹ



Նագօ Հապիպեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային վարչութեան կողմէ բաժակը կը յաճճէ Հ.Մ.Ը.Մ.Ի «Արարատ» խումբին:

Անցեալ շաբաթավերջին Պէյրութ կը գտնուէր Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.Ի «Արարատ» մարզական ակումբի տղոց պաքեթպոլի կրտսերներու խումբը, ընկերակցութեամբ՝ միութեանական պատուիրակութեան մը:

Խումբը իր եօթեայ կեցութեան ընթացքին բարեկամական երկու մրցումներ կատարեց



Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. «Արարատ» խումբը:

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի տարիքային համապատասխան խումբերու հետ, Հ.Մ.Ը.Մ. «Թնճուկեան» մարզադաշտին վրայ:

Ցէն 10 տարեկանի մրցումներուն հիւր կազմը 30-6 արդիւնքով պարտութեան մատնեց դաշտին տերերը, սակայն անիկա երկրորդին պարտութիւն մը կրեց 10-12 տարեկանի մրցումներուն՝ 31-17 արդիւնքով:

Երկու մրցումներուն արդիւնքները նկատի ունենալով, Հ.Մ.Ը.Մ. «Արարատ» յաղթական հոշակուեցաւ եւ տիրացաւ տիտղոսին:

Նշենք, թէ նախքան բաժակի տուչութիւնը, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական վարչութիւնը յիշատակի նուէրներ յանձնեց հիւր կազմին փոքրիկ մարզիկներուն:

ԵՈՒ. Է. ԷՅ. Ա.

ԱՅՍՕՐԻ Դ. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ԴԱՐՁԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Եու. Է. ԷՅ. Ա.ի ֆութպոլի մրցաշարքին Դ. հանգրուանի դարձի մրցումներուն, այսօր տեղի պիտի ունենան ճակատագրական կարգ մը հանդիպումներ: Այն խումբերը, որոնք երթին հաւասարութիւններ արձանագրած էին կամ՝ պարտութիւններ կրած, իրենց ամէն կարելին պիտի ընեն անպայման յաղթանակ մը արձանագրել, ապահովելու համար քառորդ աւարտականին իրենց տունը:

Այսօր տեղի ունենալիք ութ մրցումներէն հինգը երթին վերջ գտած են հաւասարութեամբ, ինչ որ ենթադրելու կու տայ, որ այդ հանդիպումները պիտի ըլլան բաւական զօրաւոր մրցումներ:

Վալենսիա եւ Ինթեր Միլան, որոնք երթին յաղթանակներ արձանագրած էին, աւելի հանգիստ մրցումներ ունին կատարելիք, քան Ա. Սե. Միլան, որ երթին միայն 1-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրած է:

Ստորեւ՝ Դ. հանգրուանի դարձի մրցումներուն յայտագիրը (փակագիծին մէջ նշուած են երթի մրցումներուն արդիւնքները, իսկ մրցումներուն ժամերը պետք է նկատի ունենալ Պէյրութի ժամանակացոյցով).

Ա. Սե. Միլան (Իտալիա) - Ռոտա Բերքրատէ (Հոլանտա) (1-0) ժամը 21:45ին	Պորուսիա Տորթնուտ (Գերմանիա) - Լիլ (Ֆրանսա) (1-1) ժամը 21:30ին
Սեբիլէ (Չեխիա) - Վալենսիա (Սպանիա) (0-3) ժամը 21:15ին	Լիծ (Անգլիա) - Փ. Ս. Վ. Այնտհովըն (Հոլանտա) (0-0) ժամը 22:00ին
Սյոլվան Լիպեբէք (Չեխիա) - Լիոն (Ֆրանսա) (1-1) ժամը 18:00ին	Փարմա (Իտալիա) - Հափտիլ Թէլ Աւի (Իտալիա) (0-0) ժամը 19:00ին
ԱԷՔ Աթէնք (Յունաստան) - Ինթեր Միլան (Իտալիա) (1-3) ժամը 21:30ին	Ֆէյնիւրտ Ռոթերտամ (Հոլանտա) - Ռէյնճըրկ (Սլովակիա) (1-1) ժամը 20:00ին

